

րօնեցոյն համար կ'ըսէ « Սա երբը գիտօն
 ի կողմանս արեւելից ... որ ցայն ժամա-
 նակս չէր ցրտեայ ընդ տշխարհն. սա եկեալ
 գրեաց և ուսոյց բազմայ » : Այս վկայու-
 թիւնը թէեւ կը ճանչնան թէ՛ Տնտեսեան
 և թէ՛ Մկրտչեան, բայց առանց հասկնա-
 լուս խաչատուր կ'ապրէր ժի դարու վեր-
 ջերը, ըսել է մինչեւ այդ ատեն Հայա-
 ստանի մէջ խազ չկար : Այս ատենները՝
 ինչպէս Մատենագրութեան պատմութիւնը
 կը վկայէ՝ Արեւելեան վարդապետները կի-
 լիկիս կ'երթային և անոնց գիտական նու-
 րութիւնները Արեւելք կը փոխադրէին . և
 խաչատուր ալ կ'երթայ կիլիկիս և խա-
 զերով՝ իր Հաղարծին վանքը կը դառնայ :

Ահա ուրեմն այս վկայութիւնը կը հաս-
 տատէ թէ խազը Հայաստան մտաւ կիլի-
 կիայէն . բայց սակայն և ե՛րբ ի կիլիկիս
 կիլիկեան պատմութեան հետաքննիչը
 գիտեն որ Հայք Եւրոպայի հետ սերտ յար-
 ընչութիւն ունեցան Ռուսերինանց հարստու-
 թիւնն ի վեր, խաչակրաց օրով սկսեալ .
 և մենք այդ շրջանին մէջ շատ բան փոխ
 առինք Լատիններէն կամ Եւրոպայէն . և
 ո՛չ ոք պիտի կարենայ երեւան հանել խա-
 զերով Շարական մը այդ շրջանէն առաջ .
 ուրեմն պէտք ենք բնդունիլ որ այդ ժա-
 մանակ (ժի դարու մէջ) մտաւ խազը Լա-
 տիններէն :

Եւ ասոր ամենամեծ ապացոյց մ'է այն
 նմանարիւնը՝ թէ՛ ձեւերու և թէ՛ սկզբունք-
 ներու՝ որ կան հայկական և Լատինական
 (Գրիգորեան) խազերու մէջ, և զայս ար-
 դէն ցըցուց « Բազմավէպ » ի Շարականաց
 խազից ուսումնասիրողը՝, դէմ առ դէմ
 դնելով թէ՛ Լատին և թէ՛ հայ խազերը և
 բացատրելով անոնց զօրութիւնը :

Բաց ի այս նմանութենէն՝ Լատինաց բով
 եւս կան Չորս-Չայները և Չորս-Կոլոմերը,
 ինչ որ մեր բով . Լատինք եւս շարականաց
 սկիզբը սաղմոսի տուն մը ունին՝ ինչպէս
 որ մենք « Ռոհնեացուք զՏէր... Մեծացուացէ
 անձն իմ զՏէր », և այլն :

Անոնք որ կը համարին թէ մեր խազե-
 րը Բոյներէն առած ենք՝ կ'երեւայ կամ
 մեր խազերը չեն ճանչնար և կամ յու-
 նական խազերը և անոնց օրէնքները, որ բո-
 լորովին կը տարբերին հայկականէն . և դեռ
 եթէ կը յամառին պնդել իրենց ստիպա-
 կան կարծիքը, պիտի պահանջեն իրենցմէ
 ցուցակ մը՝ ուր դէմ առ դէմ դրուած ըլ-
 լան յունական և հայկական խազերն ի-
 բրենց բացատրութեամբ, որ այնքան նմա-
 նութիւն ունենան իբրբու հետ՝ որքան որ
 ունին Լատինական՝ և Հայկական խազերը՝
 վերոյիշեալ Յուցակին մէջ ի « Բազմա-
 վէպ » Հանդիսի, 1900, յէջ 547 :

Հ. Մ. ՊՈՏՈՒՆՅԱՆ

Հ Ե Ղ Ո Ւ Կ Գ Ս Մ Ք Ա Ն

Վաղածոնիկ եղբորս յիշատակին :

Միմիղեա ծովուծ եղբը կեցած - կէս դիւթուած ,
 զը դիտէի ալիքմերում - ամղազրում
 Գէպ իմ կողմըս թաւալելով - յուզումըով
 Փըշրուիլը ոտքիս առջեւ - յարասեւ ,
 Մըտածեցի թէ ո՛վ արդեօք - իր մըտօք
 Կ'ամցըմէ թէ երկիմքի տակ , - կապուտակ ,
 Աղի ջուրի այս կոյտմ առհում՝ - շատերում
 Գերեզմամ ի եղած յամկարծ , - մոռցուած ...
 Եւ այդ պահում՝ հղբօրս համակ - յիշատակ
 Արթըմալով մըտքիս մէջ՝ ուր - միշտ մաքուր
 Եւ ամաղարով մըմացած էր - իր սուրբ սէր ,
 Մոսկուտով մը դէմքըս մէկ դի - դարծուց ,
 Այդ ծովէմ խօլ և ընծաւոր , - որ ամոր
 Նուիրակամ մարմնիմ ալ , - սիրահալ ,
 Գերեզմամը եղած էր լա՛յն , - դիւթակամ ...

« Ս Ի Կ Ք Ս »



1. Տես Բազմ. 1900, էջ 546-7 : Այս գիտը մեծ
 դիւթութիւն պիտի բնծող հայկական շարականաց եղա-
 նակները կենդանացնելու, և աւելի՛ ընտիր եղանակներ
 երեւան պիտի հանէ . ինչ որ յա՛ջորդ յօղուածով պիտի
 քրտնենք օրինակներով :

2. Բազմավէպի Շարականաց խազից Ուսումնասի-
 րողն՝ Գրիգորեան խազերու մասին առաջնորդ ունեցած
 է Հ. Յովսէփ Պօթիէ բնեզդիկեան կրօնաւորին բազմա-
 ճոտս գրքը :